



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2019 թվականի N 147- Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2019 թվականի հուլիսի 29-ի N 257-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2019 թվականի նոյեմբերի 11-ին ներկայացված N 17 արձանագրությունը

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից 9 /իննը/ քաղաքացիների սոցիալական աջակցության նպատակով հատկացնել միանվագ դրամական օգնություն ընդհանուր 1 950 000 /մեկ միլիոն իննը հարյուր հիսուն հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարի վճարումը:

ՄԱՐԶՊԵՏ

11.11.2019

Հ.ԶՈՐԱՆՅԱՆ

X